

Գ. Խ. Սահփանյան

ՀԱԿՈՐ ՊԱՐՈՆՅԱՆԻ «ԹԻՅԱԹՐՈ» ԹՈՒՐԲԵՐԵՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ

Հակոբ Պարոնյանը ունեցել է խմբագրական լայն գործունեություն՝ 1870 թ. խմբագրել է «Եփրատ» պարբերականը, 1872—1874 թթ.՝ «Մեղու» երգիծաթերթը, 1874—1877 թթ.՝ «Թատրոնը», 1876—1877 թթ.՝ «Թատրոն Բարեկամ Մանկանց» մանկական երկշաբաթերթը, 1879—1880 թթ.՝ «Լույսը», 1883 թ.՝ «Ծիծաղը», 1884—1888 թթ.՝ «Խիկարը» և այլն:

Այժմ պարզվում է, որ «Թատրոն» երգիծաթերթի հրատարակման տարիներին՝ 1874—1876 թթ. նա լույս է բնծայել նաև «Թիյաթրո» թուրքերեն երգիծաթերթը:

Այս պարբերականի գոյությունը մինչև վերջերս անծանոթ էր ո՛չ միայն ընթերցող հասարակությանը, այլև՝ Պարոնյանով զբաղվող բանասերներին, որոնցից ո՛չ մեկը (Հրանտ Ասատուր, Մաքսուտ Սանտալճյան, Արշակ Զուպանյան և ուրիշներ), չեն խոսում այս մասին: Հայ պարբերական մամուլի պատմությունն ուսումնասիրողները (Գալեմբերյան, Լևոնյան և ուրիշներ) նույնպես ոչ մի հիշատակություն չունեն: Թուրք պատմաբան Օսման Նուրին, որն իր «Արգյուլ Համիդ» եռահատոր աշխատության առաջին հատորում մանրամասնորեն թվարկում է 1870-ական թվականների կեսերի Պոլսի մամուլը, հիշատակում է 47 պարբերական, որից 13-ը՝ թուրքերեն, 9-ը՝ հայերեն, 9-ը՝ հունարեն և այլն, — ոչ թուրքերեն, և ոչ էլ հայերեն թերթերի մեջ չի հիշում Պարոնյանի «Թիյաթրո»-ն¹:

«Թիյաթրո»-ի մասին որոշ տեղեկություններ գտնում ենք թուրք նոր բանասերների երկերում: Այսպես, Սելիմ Նուսեթն իր «Թուրքական մամուլը» աշխատության մեջ ոչ միայն հիշատակում է այդ երգիծաթերթը, վկայում, որ նրա խմբագիրը եղել է Հ. Պարոնյանը, այլև որոշ զաղափար է տալիս պարբերականի հրատարակման ժամանակի, բովանդակության և այլ հարցերի մասին²:

Օգտագործելով այս աղբյուրը, «Թիյաթրո»-ի մասին գրել է նաև թուրք թատրոնի պատմաբան Ռեֆիկ Ահմեդը «Մոտավոր ժամանակների թուրքական թատրոնը» արժեքավոր աշխատության առաջին հատորում: Ահա նրա վկայությունը.

«Թատրոնի զարգացման ազդեցությամբ՝ 1874 թ. Ստամբուլում «Թիյաթրո» անունով մի երգիծաթերթ էլ է հրատարակվում: Այս թերթի խմբագիրն էր Հակոբ էֆենդի Պարոնյանը: «Թիյաթրո»-ն շաբաթական երկու անգամ էր լույս տեսնում: Առաջին համարը հրատարակվել է 1874 թ. մարտի 20-ին, չորեքշաբթի օրը: Յուրաքանչյուր համար վաճառվում էր 40 փարայի: Առաջին համարում տպագրված է մի զրույց այն ժամանակվա թերթերի միջև, որտեղ

¹ էջ 567 عثمان نوری — عبد الحميد شاتي ورور سلطانتي استانبول ۱۳۲۷

² Selim Nüzhet, Türk gazeteciligi, Istanbul, 1931, s. 65:

ծաղրվում են բոլոր թերթերը: 18 համար լույս տեսնելուց հետո՝ ծավալը մի քիչ մեծանում է, գեղեցկանում, վերնադիրը դառնում է նկարազարդ, միաժամանակ տպագրում է ծաղրանկարներ, միառժամանակից դադարում է, հետագայում նորից է հրատարակվում, բայց չի կարողանում հարատևել»³:

Սելիմ Նուսեթն ու Ռեֆիկ Ահմեդը միայն այսքան են իմացել: Ըստ երեւելույթին՝ նրանց հայտնի չի եղել Պարոնյանի հայերեն «Թատրոնը», որպեսզի նկատեին այդ երկուսի միջև գոյություն ունեցող կապը:

Դրանով հանդերձ, բերված տողերը բավական լույս են սփռում մեզ դեռ չեցած հարցի վրա: Պարզվում է պարբերականի սկզբնավորման տարին ու ամիսը, խմբագրի ով լինելը և այլն⁴:

Ռեֆիկ Ահմեդը հրատարակել է երգիծաթերթի առաջին համարի առաջին էջի նկարը և հնարավորություն տվել՝ զաղափար կազմելու նաև բովանդակության մասին: Պարզվում է, որ «Թիյաթրո»-ի առաջին էջի նյութերը նույնն են, ինչ հայերեն «Թատրոն» երգիծաթերթին: Ռ. Ահմեդի հիշատակած «զրույցը» «Թատրոնի» առաջին համարի առաջնորդող հոդվածն է, գրված դիալոգներով, որը Պարոնյանի սիրած գրելաձևերից է եղել: Այնտեղ երգիծաբանը սուր կերպով ծաղրում է հայ թերթերից մի քանիսի անսկզբունքայնությունը, քծնանքը, հաշտվողականությունն ու տգիտությունը, ճշտում է իր գիրքը, ներկայացնում ծրագիրը: Նա «Թատրոնը» այլաբանորեն ներկայացնում է Արդարության կերպարանքով և նրան տալիս է մոլորությունները ծաղրելու պաշտոն:

Ահա այս առաջնորդող հոդվածն է, որ թարգմանաբար զետեղված է «Թիյաթրո»-ի առաջին համարում:

Որքա՞ն ժամանակ է շարունակվել երգիծաթերթը. հայտնի չէ: Ռ. Ահմեդի վերոհիշյալ վկայությունից կարելի է եզրակացնել, թե այն շատ կարճ կյանք է ունեցել, չի կարողացել հարատևել:

Թուրքական մի այլ աղբյուր՝ «Իսթանբուլ անսիկլոպեդիսի»-ն, սակայն, ավելի ընդարձակ տեղեկություններ է տալիս Պարոնյանի թերթի մասին և պարզվում է, որ այն ավելի քան երկու տարի կանոնավոր լույս է տեսել:

«Իսթանբուլ անսիկլոպեդիսի»-ում Հ. Պարոնյանի մասին գրել է մի հայ՝ Գևորգ Փամուկչյանը: Նա իր հոդվածի սկզբում ասում է, թե Պարոնյանը համարվում է հայերի Մոլիերը: Այս գնահատականը ճիշտ չի թվացել խմբագրությանը և առիթ է տվել հոդվածին կցելու մի ընդարձակ ծանոթագրություն, որտեղ խմբագիրը կատարում է իր վերապահությունները: Նա ասում է, որ Հանրագիտարանի խմբագիր Ռ. Քոչուրի հնարավորությունից դուրս է կարծիք հայտնել հայ երգիծական գրականության մեջ Պարոնյանի ունեցած դերի մասին, բայց քանի որ Պարոնյանը հրատարակել է նաև թուրքերեն «Թիյաթրո»-ն, ապա այդ թերթի նյութերի հիման վրա նրան Մոլիերի հետ համեմատել՝ նշանակում է ընդունել, որ հայերը առհասարակ երգիծական գրականություն չեն ունեցել:

Իր. Քոչուն իր միտքը ապացուցելու համար բերում է Հակոբ Վարդուկյանի

³ Refik Ahmeti. Yakın çağlarda Türk tiyatrosu, birinci cilt, İstanbul, 1934, s. 43:

⁴ «ԵՇՅ»-ի II հրատարակության 43-րդ հատորում զետեղված «Թուրքիա» հոդվածում ևս նշվում է «Թիյաթրո»-ի հրատարակման փաստը, սակայն պետք է դարձանալ, որ հոդվածագիրը զանց է առել հիշատակել, թե այն խմբագրել է Հակոբ Պարոնյանը, մինչդեռ նա օգտագործել է հենց վերոհիշյալ թուրքերեն աղբյուրները և փաստը հայտնի էր իրեն:

تَیَانِیَن

[illegible]

մասին Պարոնյանի գրած երգիծական գիմանկարի սկզբի հայտնի տողերը և դրանք համարում ոչ թե լուրջ երգիծանք, այլ՝ գոեհկաբանություն:

Ահա այս առիթով է, որ Քոչուն բավականաչափ լայն տեղեկություններ է տալիս «Թիյաթրո»-ի մասին: Նա ասում է, թե իրենց արխիվում պահպանվում են այդ թերթի 32-րդ և 75-րդ համարները: Ի դեպ, 75-րդ համարի առաջին էջի լուսատիպն էլ զետեղված է Հանրագիտարանում: Այդ այն էջն է, որտեղ տպագրված է Վարդուկյանի երգիծական գիմանկարի թուրքերեն թարգմանությունը՝ ծաղրանկարով:

Քոչուն ասում է, թե թերթը լույս է տեսել շատ աղքատ բովանդակությամբ, շաբաթը երկու անգամ, և երևում է, որ բոլոր նյութերը գրել է ինքը Պարոնյանը: Նա զարմանք է հայտնում, որ Ազրիանապոլսում ծնված-մեծացած մի գրող, որն ապրել է Պոլսի նման մտավորական մի կենտրոնում, լավ չի իմացել թուրքերենը, ապա այդ բացատրում է ժամանակի գրողների թշվառ վիճակով, այն բանով, որ Պարոնյանը հարկադրված է եղել մի կտոր հացի ետևից վազել:

Քոչուն որոշ տեղեկություններ էլ տալիս է «Թիյաթրո»-ի 32-րդ համարի մասին, ասում, թե այնտեղ ծաղրված է թուրքական «Ճերիտեի հավատիս» թերթը:

Ահա սրանք են այն փաստերը, որ մենք ունենք Հ. Պարոնյանի «Թիյաթրո»-ի մասին:

Ուրեմն՝ Պարոնյանը հրատարակել է «Թիյաթրո» վերնագրով մի երգիծաթերթ, որի առաջին համարը լույս է տեսել 1874 թ. մարտ ամսին, հայերեն «Թատրոնի» հետ միասին, 75-րդ համարը՝ 1875 թ. մայիս ամսին:

Պետք է ենթադրել, որ պահպանված 75-րդ համարը չի եղել վերջինը, այն շարունակվել է նաև հետագայում, գուցե մինչև 1876 թվականը:

Մեզ զբաղեցնում են հետևյալ հարցերը.

1. «Թիյաթրո»-ի առաջացման դրդապատճառները:

2. Արդյո՞ք նա եղել է հայերեն «Թատրոնի» սոսկական պատճենը, ինչպես գրում է «Իսթանբուլ անսիկլոպեդիսի»-ի խմբագիրը:

Այն փաստը, որ «Թիյաթրոն» սկսել է լույս տեսնել հենց «Թատրոնի» առաջին համարի հետ միասին, 1874 թ. մարտ ամսից, ցույց է տալիս, որ Պարոնյանը հենց սկզբից որոշել է թերթը հրատարակել երկու լեզվով:

Հայտնի է, որ Հ. Սվաճյանը՝ մահվանից մի քանի ամիս առաջ, անվճար, Պարոնյանին էր հանձնել «Մեղու» պարբերականի հրատարակման արտոնություն իրավունքը: Պարոնյանը՝ ստանալով այդ արտոնությունը՝ դիմել էր կառավարության և թույլտվություն խնդրել այն հրատարակելու «Թատրոն» անունով և ստացել էր իրավունք:

Այդ տարիներին Պոլսում լույս էին տեսնում 10-ի շափ հայերեն թերթեր, նրանցից և ոչ մեկին չէր ներկայացվում պահանջ՝ թերթը հրատարակել նաև թուրքերեն: Ուստի Պարոնյանը ինքն է որոշել իր թերթը լույս ընծայել նաև թուրքերեն:

Բանն այն է, որ թուրքական մամուլն այդ թվերին շատ խղճուկ վիճակ ուներ: Օսման Նուրիի տվյալներով՝ այդ ժամանակ Պոլսում լույս էին տեսնում, ճիշտ է, թվով 17 թերթեր ու ամսագրեր, սակայն դրանց ճնշող մեծամասնությունը պատահական անձնավորությունների կողմից խմբագրված թերթեր:

⁵ Reşad Ekrem Koçu, İstanbul Ansiklopedisi, Dördüncü cilt, s. 2124.

էին, մեծ մասամբ պահպանողական ուղղության⁶։ Առաջավոր թերթերի թիվը 1—2-ից չէր անցնում։ Թույլ էր հատկապես երգիծաբանական գրականությունը։ Գերազանցապես օտարների կողմից խմբագրված մի քանի պարբերականներ («Տիոթեն» և այլն), աննշան հեղինակություն ունեին Պալսում։ Մամուլի վիճակն այնքան ողբալի էր, որ թուրք որոշ մտավորականներ, սովորելով մեսրոպյան այրուբենը, հաճույքով կարգում էին «Մանգումեի էֆքյար», «Մեճ-մուալի հավատիս» հայատառ թուրքերեն թերթերը, որոնք խմբագրվում էին անհամեմատ ավելի կարող, եվրոպական մշակույթին ծանոթ անձնավորությունների կողմից, ինչպիսին էր Հովսեփ Վարդանյանը⁷։

Այս պայմաններում՝ Պարոնյանի թուրքերեն «Թիյաթրո»-ի հրատարակությունը կարող էր մեծ թվով ընթերցողներ ունենալ։

Բայց դա հարցի մի կողմն էր։ Կար ավելի էականը։ Պոլսահայ ո՛չ մի թերթ թուրքական մամուլի, թուրքական իշխանությունների, պետական պաշտոնյաների դեմ այնպիսի սուր հարձակումներ չէր գործում, որքան Պարոնյանը «Մեղվի» էջերում։ Այժմ, երբ նա հրատարակելու էր նոր թերթ, անշուշտ նպատակահարմար էր թշնամու հետ դեմ առ դեմ կանգնել նրա հասկացած լեզվով ու զենքով, թույլ չտալ, որ ռեակցիոն որոշ գործիչներ Պարոնյանի մըտքերը աղավաղելով՝ ներկայացնեն մամուլի տեսչությանը։

«Բսթանբուլ անսիկլոպեդիսի»-ի խմբագրությունը Պարոնյանին նվիրված հոդվածին կցած իր վերապահումների մեջ այն կարծիքն է հայտնում, թե «Թիյաթրոն» հայերեն «Թատրոնի» թարգմանությունն է։

Եթե դա այդպես լիներ, մենք ավելի քիչ ասելիք կունենայինք։ Բայց մեր տրամադրության տակ գտնվող № 75-ի մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ տեսակետը ճիշտ չէ։ Եվ չէր էլ կարող ճիշտ լինել, քանի որ հայերեն «Թատրոնը» լույս է տեսել շաբաթական երեք համար, թուրքերենը՝ երկու, իսկ որոշ շրջանում հայերենը նույնիսկ դարձել է օրաթերթ։

Հետո, անիմաստ կլինեն ազգային կյանքին վերաբերող առօրյա երկարապատում վեճերն ու ներքին պայքարը ցուցադրող հարյուրավոր հոդվածները, որոնցով լի են «Թատրոնի» էջերը, նույնությամբ թարգմանել թուրքերենի, նյութեր, որոնք թուրք ընթերցողին ոչինչ չէին տա, նույնիսկ կարող էին անախորժ տպավորություն ստեղծել պետական շրջաններում։

Պետք է ենթադրել, որ Պարոնյանը ընտրովի թարգմանել և թուրք ընթերցողին ներկայացրել է այն նյութերը, որոնք նաև թուրքական շրջաններում կարող էին հետաքրքրությամբ ընթերցվել։ Մեր ձեռքի տակ եղած համարը լիովին հաստատում է այս տեսակետը։ Այսպես, եթե «Թիյաթրո»-ի առաջին համարի առաջին էջը նույնությամբ թարգմանված է «Թատրոնի» 1874 թ. մարտի 5-ի համարի առաջին էջից (դա շատ հասկանալի է, քանի որ այն ըստ էության նոր հրապարակ եկող մի թերթի ծրագիրն էր), ապա 75-րդ համարի նյութերի ընտրությունը կատարված է որոշ ծրագրով։ Օրինակ՝ նախորդ օրը լույս տեսած հայերեն «Թատրոնից» նույնությամբ թարգմանված է Վարդույանի մասին գրված երգիծական դիմանկարը, որը հետագայում, ինչպես հայտնի է, զետեղվել է «Ազգային ջոջերում»։

⁶ Այդ թերթերի թվարկումը տես՝ Օսման Նուրիի հիշատակված աշխատության մեջ, էջ 567։

⁷ Այս մասին մանրամասն տես՝ թուրքական «Yakın tarihimiz» շաբաթաթերթի 1962 թ. մարտի համարում։

Վարդովյանը նույնքան ճանաչված ու սիրված անձնավորություն էր թուրքական շրջաններում, որքան հայկական, կապված էր հասարակական տարբեր խավերի հետ, սկսած թուրք մտավորականությունից (գրողներ, հրապարակախոսներ և այլն), վերջացրած թուրք պաշտոնյաներով:

Բայց նույն համարում հրատարակված է նաև «Ալթմըշ փարայա» (Վաթսուն փարայով) ֆելիետոնը, գրված Պարոնյանին հատուկ՝ սրամտություններով ու աշխույժ ոճով: Մենք որոնեցինք ու այդ նյութը գտանք հայերեն «Թատրոնում»՝ սկզբում մի քանի տող հայերեն լեզվով գրված, ապա շարունակությունը՝ հայտառ թուրքերեն: «Թիյաթրո»-ում տպվածը, ինչպես երևում է շարունակությունում բառից, լույս է տեսել երկու համարում: 75-րդ համարում զետեղվածը չի պարունակում հոդվածի այն հատվածները, որոնք վերաբերում են զուտ հայկական կյանքին, նվիրված են հայերեն թերթերի, խմբագրությունների քննադատությանը: Այսպես, հոդվածի վերջին մասում կա մի խայթոց «Փունջի» դեմ, որը պակասում է թուրքերենում: Դրա փոխարեն կա մի խայթոց, որը հայերենում չկա:

Նույն այդ համարում Պարոնյանը հասարակական որոշ երևույթներ ծաղրել է չափածո լեզվով, թուրքերեն ոտանավորով, որը պակասում է «Թատրոնում»:

Որ «Թիյաթրո»-ն մեխանիկական թարգմանությունը չէ հայերենի, ապացուցվում է նաև մի այլ փաստով: Ինչպես հայերեն «Թատրոնը», այնպես էլ թուրքերենը՝ հաճախ ենթարկվել է խափանումների: Ուշագրավ է, որ «Թիյաթրո»-ն փակվել է այն ամիսներին, երբ «Թատրոնը» լույս էր տեսնում. կնշանակի խափանման առիթ տվող հոդվածը հայերենում չի եղել:

Բերենք մի օրինակ.

1875 թ. մայիս ամսին «Թիյաթրո»-ն երկու ամսով փակվել է քաղաքական տեսակետից վնասակար մի հոդված հրատարակելու պատճառով: Ժամանակի թերթերից «Մասիսը» լուրը հայտնել է առանց պատճառը նշելու, իսկ Պարոնյանը այդ բանն իր ընթերցողներին տեղեկացրել է հրապարակելով Տպագրական տեսչության կարգադրությունը, որտեղ ասված է, թե այդ թերթը իր քաղաքական հոդվածներից մեկում ծաղրել է մեծ պետություններից մեկի քաղաքականությունը անվայել լեզվով, դրա համար երկու ամիս դադարեցվելու է:

Պարոնյանը այդ որոշմանը կցել է մի ուշագրավ ծանոթագրություն, որտեղ ծաղրական ձևով պրում է. «Այս ազդարարությունն էլ հասկցվի, որ տաճկերեն լեզվով հրատարակվող «Թատրոնի» մեջ հզոր տերությունց միուն մեկ արարքը կատակով ծաղրաբանել ենք, բայց որովհետև կառավարության սկզբունքն չներեր եղեր, որ յուր լրագիրներն հզոր տերությունց արարքներուն վրա կատակաբանեն, ուստի և «Թատրոն» (այսինքն՝ «Թիյաթրո»-ն—Գ. Ստ.) երկու ամիս դադարման դատապարտվեր է:

Ահավասիկ հանցանքնիս, ահավասիկ պատիժնիս:

Ուրեմն՝ «Թիյաթրո»-ն փակվել է այնպիսի հոդվածի համար, որը հայերենում չի եղել և հայերեն «Թատրոնը» շարունակել է իր գոյությունը:

«Թիյաթրո»-ի հայտնաբերումը մի այլ տեսակետից էլ կարևոր է. մենք տեսանք, որ «Աղգային ջոջեր» շարքից Հ. Վարդովյանի երգիծական դիմանկարը հենց գրվելու օրերին թարգմանվել է թուրքերենի և լույս տեսել այդ երգիծաթերթում: Եթե մեզ հասած ընդամենը երկու համարներից մեկում կա նման մի ստեղծագործություն, չպետք է տարակուսել, որ մոտավորապես 100

համարի հասնող հավաքածոյում կարող էին տպագրվել Պարոնյանի հիմնական երկերից մի քանիսը: Տարօրինակ պիտք է լիներ նաև այն, որ նա թերթը լցնէր քաղաքական լուրերով, սուր քննադատության շենթարկեր հենց թուրքական իրականության թերությունները:

Ինչ խոսք «Չոջերից» շատերը չէին հետաքրքրի թուրքերին, սակայն մի քանիսը հավասարապես ծանոթ էին թուրք իրականությանը և կարող էին թարգմանվել:

Ուրեմն՝ Պարոնյանի երկերը դեռևս 1870-ական թվականներին թարգմանվել են թուրքերեն և ընթերցվել թուրք մտավորականության և ժողովրդի կողմից:

Պարոնյանը գրել է թուրքերեն լեզվով այնպիսի երկեր, որոնց հայերենը չի տպագրվել. անկասկած՝ այո՛. գուցե Վարդուկյանի թելադրանքով, նա երգիծական դիմանկարներ գրեր նաև թուրք ջոջերի մասին, որոնք տպագրեր միայն «Թիյաթրո»-ում:

«Թիյաթրո»-ի հոգվածների նկատելի մասը հենց սկզբից գրված է եղել թուրքերեն, լույս է տեսել նախ հայերեն «Թատրոնում»՝ հայատառ թուրքերենով, իսկ ապա՝ «Թիյաթրո»-ում արաբատառ թուրքերենով: Ուստի պետք է ենթադրել, որ «Թատրոնում» տպագրված նման մի շարք նյութեր, ինչպես՝ «Սրթա լագըրտըլարը» (Ասեկոսեններ), «Տաղ յուրումեսե ապտալ յուրյուսուն» (Եթե լեռը չի շարժվում, հիմարը թող շարժվի), «Ֆալ պագալըմ» (Գուշակություններ անենք) նույնությամբ լույս են տեսել և թուրքերեն հրատարակության մեջ, մանավանդ, որ դրանք մեծ մասամբ ունեն ընդհանուր, բոլորին հետաքրքրող բովանդակություն, կապված չեն միայն հայ իրականության հետ:

Հայատառ թուրքերեն և արաբատառ թուրքերեն հոգվածների մեջ կա մի այլ առանձնահատկություն ևս: Զուտ հայ իրականությունը շոշափող հայատառ թուրքերեն հոգվածներում գործածվում են հայերեն բառեր, — որովհետև դրանց ընթերցողները եղել են թուրքախոս հայեր:

Օրինակ՝

«—Բարի լույս, նիկողիմոս աղա.

—Աստուծո բարին, խայր օլա նե՛ վար:

—Սիգե պիր իբի չիֆթ լագըրտըմ վար տա» և այլն:

Մինչդեռ նույն «Թատրոնում» տպագրված հայատառ թուրքերեն որոշ նյութեր հայերեն և ոչ մի բառ չեն պարունակում, չնայած գրված են դարձյալ ժողովրդական թուրքերենով: Ակնհայտ է, որ Պարոնյանը նպատակ է ունեցել դրանք տպագրելու «Թիյաթրո»-ում:

Մենք տեսանք, որ թուրք բանասերը Պարոնյանի լեզուն համարում էր գոհհիկ, ողորմելի: Նա հաշվի չի առել մի փաստ: Պարոնյանը իր թերթը հրատարակում էր ժողովրդական լեզվով, ժողովրդի համար: Հայտնի է, որ թուրքական նոր գրականության սկզբնավորման այս շրջանում դեռևս գերիշխողը արաբա-պարսկական բառակույտով, մտածողությամբ խճճված լեզուն էր, որը որքան խրթին լիներ, այնքան համարվում էր բարձր ոճ: Այդպես էին գրվում անգամ ընթացիկ գրությունները, տպագրական տեսչության կարգադրությունները, արժանանալով Պարոնյանի ծաղրին: Հայերը նույնպես գրել են այդ ոճով, գրել են և՛ չափածո երկեր (Պիտար Արապաճյան—«Գանձեր»), և՛ գեղարվեստական արձակ երկեր (Հ. Պալքճյան—«Կեսարիայի մեծամեծները»), և անգամ պատմագրական վեպեր (Հովսեփ Վարդանյանի «Նապոլեոնը»), բոլորն

էլ հայատառ թուրքերեն, որոնք ընթերցվել են նաև թուրք մտավորականության որոշ շերտերի կողմից: Բայց նման երկերի թիվը մի քանի տասնյակից չէր կարող անցնել: Պատահական չպետք է համարել, որ նույն Հովսեփ Վարդանյանը իր «Ագապի» վեպը հրատարակել է ժողովրդական թուրքերենով:

Այդպես էր վարվում նաև Պարոնյանը՝ հրատարակելով իր «Թիյաթրո» թերթը: Ադրիանապոլսում ծնված Պարոնյանը չէր կարող թուրքերենը չիմանալ ըստ ամենայնի, քանի որ այն նրա ծննդավայրի հայերի խոսակցական լեզուն էր: Հետագայում ֆրանսերեն, հունարեն, բուլղարերեն լեզուները սովորած երգիծաբանը հիմնովին յուրացրել էր թուրքական գրական լեզուն, մանավանդ որ նա պաշտոնավարել է հեռագրատանը, որտեղ այն անխուսափելիորեն անհրաժեշտ էր: Պարոնյանի լեզվի «աղբատությունը», թուրք բանասերի խոսքով՝ «գոնհկաբանությունը», ոչ թե արդյունք է չիմացության, այլ ժողովրդական մտածողության հարազատ մնալուն:

«Թիյաթրո» թերթը լույս է տեսել չորս էջով՝ ճիշտ հայերեն «Թատրոնի» ծավալով, մեծ տառերով: «Իսթանբուլ անսիկլոպեդիսի»-ի խմբագիրը անգամ ձանձրույթ է հանձն առել հաշվելու, թե յուրաքանչյուր համարում քանի բառ կա և գտել է, որ 1000 բառից չի անցնում: Թերթի «Թիյաթրո» անվան վերևում, ինչպես հայերենում, գրոշմված է նույն ծաղրանկարը, որտեղ կենդանական աշխարհի տարբեր ներկայացուցիչների դիմակներով մարդիկ հանդես են գալիս որպես ժամանակաշրջանի բարբերը ներկայացնող պերսոնաժներ:

Բացի վերոհիշյալ ճակատային ընդհանուր կլիշեից, որը կրկնվել է բոլոր համարներում, «Թիյաթրո»-ն վերջին էջում ունեցել է նույն ծաղրանկարները, ինչ հայերենում: Մեր ձեռքի տակ եղած № 75-ի միակ օրինակի ծաղրանկարը տեսնում ենք «Թատրոնի» դրանից 2 օր առաջ հրատարակված համարում:

Ինչպես հայերենը, «Թիյաթրո»-ն էլ տեղ է տալիս հայտարարությունների, բայց ուշագրավ է, որ մենք այնտեղ չենք գտնում զուտ հայկական իրականության հետ կապված ծանուցումներ (հայերեն գրքերի հրատարակությունների, դպրոցական երեկույթների մասին), ընդհակառակը՝ գտնում ենք այնպիսի հայտարարություններ, որոնք կհետաքրքրեն թուրքերին: Պետք է ենթադրել, որ «Թիյաթրո»-ում լայն տեղ է տրվել Հակոբ Վարդուկյանի թատերախմբի թուրքերեն ներկայացումներին՝ ոչ միայն հայտարարություններով, այլ թատերախոսականներով: Այս բոլոր հարցերի առավել սպառիչ պատասխանը մենք կարող ենք տալ միայն այն ժամանակ, երբ մեր ձեռքի տակ ունենանք «Թիյաթրո» թերթից թեկուզ մի քանի համար:

Մինչդեռ հայերենում Պարոնյանը ստորագրում է ՏԵՐ և խմբագիր՝ Հ. Հ. Պարոնյան, թուրքերենում հիմնական նյութերից անմիջապես հետո, ստորագրում է «Ակոբ Պարոնյան»: Հստ երևույթին թուրքական թերթերի համար դա ընդունված ձև է եղել:

Այսպիսով, Հ. Պարոնյանի խմբագրական գործունեության մեջ ուշագրավ երևույթ պետք է համարել «Թիյաթրո» պարբերաթերթի հրատարակությունը մոտ երկու տարի, մի պարբերաթերթ, որը տպագրված լինելով ոչ միայն թուրքերեն լեզվով, այլև թուրքերեն տառերով, առաջին լուրջ փորձն է հանդիսանում հայ և թուրք առաջավոր մտավորականության ու ընթերցողների մերձեցման ուղղությամբ: Պարոնյանի նպատակն է եղել, միաժամանակ, երգիծանքի ուժով խարազանել սուլթանական բռնապետության ներքին ու արտաքին քաղաքականությունը: